

---

## ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԴՐԴԱՊԱՏՏԱՆՈՒՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱՎՆԵՐԻ ՓՈԽՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

### ՍԻՐԱՆՈՒՇ ԱՆՏՈՆՅԱՆ

Լինելով հասարակության անդամ և միջանձնային հարաբերությունների սուբյեկտ՝ անձը հաճախ արտահայտում է **սոցիալական հետաքրքրություն, այլասիրություն, կարեկցողականություն**, թեև բազմաթիվ իրավիճակներում մարդու վարքի այդ դրսևորումները կարող են լինել կեղծ, լոկ քողարկված, թաքնված եսասիրության հետևանք:

Է. Ֆրոմը նշում է, որ հաճախ մարդը չի գիտակցում սեփական **թաքնված եսասիրության** առկայությունը՝ իր արած քայլերը համարելով ամենաանկեղծ սիրո և բարության դրսևորում: Նրա դիտարկմամբ, այն մարդիկ, «ովքեր զուրկ են եսասիրությունից», ոչինչ չեն ցանկանում իրենց համար, այլ ապրում են միայն ուրիշների համար և նույնիսկ հպարտանում, որ իրենք իրենց ուրիշներից ցածր են դասում: Անձը չի կարողանում հասկանալ, թե ինչպես է ստացվում, որ ինքն ընդհանրապես եսասեր չէ, բայց զգում է իրեն շատ դժբախտ: Է. Ֆրոմի համոզմամբ՝ «եսասիրության բացակայության դիմակի տակ թաքնված է ոչ պակաս ուժեղ եսակենտրոնություն»<sup>1</sup>: Նա հաստատում է, որ եսասիրության լիովին բացակայությունը եսակենտրոնության նախանշաններից (հաճախ ամենաեական) է<sup>2</sup>:

Այլասիրության որակը սերտորեն կապված է Ա. Ադլերի անձի տեսության հիմնադրույթներից մեկի՝ սոցիալական հետաքրքրության երևույթի հետ: Ըստ Ա. Ադլերի՝ սոցիալական հետաքրքրությունը բնածին սոցիալական բնագոյ է, որը ստիպում է մարդկանց հրաժարվել իրենց եսասիրական նպատակներից՝ հանուն համընդհանուր (սոցիալական հանրության) նպատակների: Սոցիալական հետաքրքրության արտահայտումը նա համարում է թերարժեքության բարդույթի հաղթահարման ուղիներից մեկը, երբ անձն իր գերազանցության ձգտումը հարաբերակցում է այլ մարդկանց բարեկեցության հետ<sup>3</sup>: Այն ուղղված է մարդու թերարժեքության փոխհատուցմանը, որի դրսևորման հետևանքով փոխվում է մարդու ինքնագնահատականը, ինքնավերաբերմունքը. դիմացիմին օգնելով՝ նա օգնում է իրեն ազատվել թերարժեքությունից, բարձրացնել ինքնագնահատականը, ընդունել ինքն իրեն: Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ անձի թերարժեքության հաղթահարմանն ուղղված սոցիալական հե-

---

<sup>1</sup> **Фромм Э.** Иметь или быть? Киев, 1998, с. 138.

<sup>2</sup> Տե՛ս **Фромм Э.** Бегство от свободы. Человек для себя. Минск, 2000, с. 144.

<sup>3</sup> Տե՛ս **Хьелл Л., Зиглер Д.** Теории личности. СПб., 2002, с. 171-176.

տաքրքրությունը կեղծ է, թվացյալ, քանի որ այս դեպքում մարդուն համագործակցության է մղում ոչ թե համագործակցելու, հանրագուտ գործունեություն ծավալելու ցանկությունը, այլ իր ինքնագնահատականը բարձրացնելու ձգտումը: Ուստի առաջարկում ենք տարբերակել «կեղծ կամ թվացյալ սոցիալական հետաքրքրություն» և «իրական սոցիալական հետաքրքրություն» հասկացությունները: Սակայն ինչպե՞ս կարող ենք տարբերակել թաքնված եսասիրությունը (կեղծ այլասիրությունը) իրական այլասիրությունից, թվացյալ սոցիալական հետաքրքրությունը իրական սոցիալական հետաքրքրությունից: Մեր կարծիքով, պետք է ուսումնասիրել այլասիրության, կարեկցողականության, սոցիալական հետաքրքրության հիմքում առկա արտաքին և ներքին դրդապատճառների գերակայությունը:

Ներքին դրդապատճառների գերակայության դեպքում անձին ակտիվության են մղում գործունեության ընթացքն ու բովանդակությունը, հետաքրքրությունը իրականացվող գործունեության նկատմամբ կամ այդ գործունեության հետ բովանդակային կապ ունեցող նպատակները: Իսկ արտաքին դրդապատճառները գտնվում են գործունեությունից դուրս և ոչ մի բովանդակային կապ չունեն նրա հետ<sup>4</sup> (օրինակ՝ հարգանքի, ընդունելության արժանանալու ձգտում, խրախուսանքներ, պարգևներ, պաշտոնի առաջխաղացում, նյութական վարձատրություն): Ինչպես նկատում է Ե. Պ. Իլյինը, դրդապատճառները միշտ ունեն ներքին պայմանավորվածություն, նրանք այսպես, թե այնպես առաջանում են մարդու ներսում, սակայն կարող են կախված լինել արտաքին գործոններից, կարող են խթանվել արտաքին ազդակների կողմից: Ուստի համամիտ լինելով նրա կարծիքի հետ՝ գտնում ենք, որ տրամաբանական կլինի ասել ոչ թե արտաքին կամ ներքին դրդապատճառներ, այլ արտաքին կամ ներքին գործոններով խթանվող դրդապատճառներ, արտաքին կամ ներքին գործոններով պայմանավորված դրդապատճառներ<sup>5</sup>: Ընդսմին, մեր կարծիքով, բացահայտելով այլասիրության, կարեկցողականության, սոցիալական հետաքրքրության հիմքում արտաքին կամ ներքին դրդապատճառների գերակայությունը, մենք կարող ենք պարզել այդ անձնային որակների դրսևորման առանձնահատկությունները:

Սոցիալական հետաքրքրության, այլասիրության և դրդապատճառների կապը բացահայտելու համար իրականացրել ենք հետազոտություն 33 ՁՈԻ սպայահրամանատարական կազմի շրջանում:

Ձինվորական գործունեությունը այնպիսի մասնագիտական ոլորտ է, որտեղ վառ արտահայտված է անձի ղեկավարելու առանձնահատկությունը, գործում է հրաման հասկացությունը, կա այնպիսի ընդգծված մի ստորակարգություն, ուր մարդը մի օղակում ղեկավար է, մյուսում՝ ենթակա: Ձինձառայողների ողջ գործունեությունը, նրանց փոխհարաբերությունները կառուցվում են զինվորական կանոնակարգերի պահանջներին, հրահանգներին, հրամանատարների և ղեկավարների հրամաններին համա-

<sup>4</sup> Տե՛ս **Занюк С.** Психология мотивации. Киев, 2002, էջ 65-66:

<sup>5</sup> Տե՛ս **Ильин Е. П.** Мотивация и мотивы. СПб., 2002, էջ 68

պատասխան: Ստորադասության և համաստորադասության միջանձնային հարաբերությունները զինվորական խմբում ձևավորվում են խիստ ստորակարգության և միանձնյա ղեկավարության սկզբունքի հիման վրա: Սակայն խիստ ստորակարգության, հրամանատարին աներկբա ենթարկվելու հետ մեկտեղ, բանակում միջսպայական փոխհարաբերությունները ենթադրում են փոխադարձ հարգանք, փոխըմբռնում, համախմբվածություն, խմբային զգացում, հայրենիքի պաշտպանության գործում յուրաքանչյուրի դերի կարևորության գիտակցում<sup>6</sup>: Քանի որ հրամանատար-ղեկավարի գործունեության արդյունավետ իրականացման համար մեծ նշանակություն ունեն սոցիալական հետաքրքրության, այլասիրության, կարեկցողականության դրսևորումները, ուստի սպաների շրջանում անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումն ունի գիտական ու գործնական մեծ նշանակություն: Նման ուսումնասիրություն իրականացնելու նպատակով հետազոտվել է 138 սպա, այդ թվում՝ գումարտակի, վաշտի, դասակի հրամանատարներ:

Գործունեության ներքին և արտաքին դրդապատճառների ուսումնասիրության համար ընտրվել է Կ. Ջամֆիրի մշակած «Աշխատանքային գործունեության դրդապատճառների կառուցվածքը» մեթոդիկան<sup>7</sup>:

Այլասիրության, սոցիալական հետաքրքրության, կարեկցողականության արտահայտվածությունը բացահայտելու համար կիրառվել է «Անձնային և գործարար որակների փորձագիտական գնահատում» թեստ-հարցարանը<sup>8</sup>:

Ինքնաիրացումը չափելու համար օգտագործվել է «Ինքնաիրացման թեստ» մեթոդիկան՝ ադապտացված Մ. Լոմոնոսովի անվան համալսարանի հոգեբաններ Լ. Յա. Գոզմանի, Յու. Է. Այրոշինայի, Մ. Վ. Ջագիկայի և Մ. Վ. Քրոզի կողմից<sup>9</sup>: Քանի որ սոցիալական հետաքրքրությունը, այլասիրությունը համարվում են ինքնաիրացող մարդու բնութագրեր, ուստի այդ որակների թեստային տվյալների հարաբերակցումը ինքնաիրացման թեստի՝ մասնավորապես ինքնաընդունման, վարքի ճկունության, ինքնաբխության սանդղակների ցուցանիշների հետ, թույլ կտա բացահայտել անձի մեջ այդ որակների իրական կամ թվացյալ լինելը:

Մեր կատարած հետազոտության տվյալները ենթարկվել են համահարաբերակցական վերլուծության, մաթեմատիկական վերլուծությունը իրականացվել է համակարգչային SPSS հաշվողական ծրագրի միջոցով՝ հաշվի առնելով Սպիրմենի համահարաբերակցական գործակիցը:

Հետազոտության տվյալների մաթեմատիկական վերլուծությունը հավաստում է արտահայտված ուղիղ հարաբերակցական կապի առկայությունը գործունեության արտաքին դրական դրդապատճառների և գործարարության միջև ( $r=0.319$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), ինչը նշանակում է, որ արտա-

<sup>6</sup> Տե՛ս «Современная военная психология». Хрестоматия. Минск, 2003, էջ 93-94:

<sup>7</sup> Տե՛ս **Ильин Е. П.**, նշվ. աշխ., էջ 446-447:

<sup>8</sup> Տե՛ս **Райгородский Д. Я.** Практическая психодиагностика. Методики и тесты. Самара, 2007, էջ 434:


<sup>9</sup> Տե՛ս **Райгородский Д. Я.** նշվ. աշխ., էջ 539:

քին դրական դրդապատճառների գերակայության դեպքում հրամանատարը բնութագրվում է արտահայտված գործարար որակներով: Հատկանշական է նաև ուղիղ հարաբերակցական կապի առկայությունը գործարարության և դոմինանտության ( $r=0.503$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), գործարարության և ուղղվածության (ուղղվածության սանդղակի բարձր ցուցանիշները բնորոշում են սոցիալական հետաքրքրության արտահայտվածությունը անձի մոտ) ( $r=0.632$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), գործարարության և կարեկցողականության ( $r=0.250$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ), ուղղվածության և դոմինանտության ( $r=0.305$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), ուղղվածության և կարեկցողականության ( $r=0.375$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) սանդղակների միջև:

Ինչպես նկատում ենք, եռակողմ ուղիղ համեմատական փոխհարաբերություն է բացահայտվել մի կողմից գործարարության, ուղղվածության, դոմինանտության, մյուս կողմից՝ գործարարության, ուղղվածության, կարեկցողականության միջև, որը ներկայացնում ենք գծապատկերի տեսքով (1 հոծ գծով նշագրվում է թույլ արտահայտված, 2 հոծ գծով՝ ցայտունորեն արտահայտված ուղիղ հարաբերակցական կապերը):

### Գծապատկեր 1

#### Անձնային որակների և գործարարության փոխալման ավորվածությունը




Հետազոտական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արտահայտված գործարար որակներ ունեցող հրամանատարը մի կողմից առանձնանում է սոցիալական բարձր ուղղվածությամբ՝ սոցիալական հետաքրքրության, հասարակական գործունեության արտահայտվածությամբ և բարձր կարեկցողականությամբ՝ դիմացիմին ապրումակցելու, հասկանալու ցանկությամբ, մյուս կողմից՝ բարձր դոմինանտությամբ՝ իշխանության, գերազանցության, նվաճման, պայքարի ձգտմամբ: Ընդամին, պետք է փաստել, որ արտահայտված գործարար որակներով հրամանատարը սոցիալական ուղղվածությունն (սոցիալական հետաքրքրությունը) ու կարեկցողականությունը հարաբերակցում է իշխանության, դոմինանտության ձգտման հետ: Իսկ ինչպես նշեցինք, գործարար որակների բարձր արտահայտվածություն բացահայտվել է արտաքին դրական դրդապատճառների գերակայության դեպքում:

Հետազոտության ընթացքում բացահայտվել է նաև, որ արտահայտված գործարարությամբ, սոցիալական ուղղվածությամբ և դոմինանտությամբ առանձնացող հրամանատարը մի կողմից բնութագրվում է ինքնափ-

րացող անձին հատուկ արժեքների ընդունմամբ և կիրառմամբ, մյուս կողմից՝ վարքի ցածր ճկունությամբ՝ դոգմատիզմով, խստորեն հասարակության ընդհանուր, ստանդարտ սկզբունքներին ենթարկվելու հատկությամբ և ցածր ինքնաընդունմամբ: Վերջինիս մասին վկայում է ուղիղ հարաբերակցական կապերի առկայությունը գործարարության և արժեքային կողմնորոշումների ( $r=0.350$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), դոմինանտության և արժեքային կողմնորոշումների ( $r=0.384$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) սանդղակների միջև, ինչպես նաև՝ հակադարձ հարաբերակցական կապերի առկայությունը գործարարության և վարքի ճկունության ( $r=-0.353$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), ուղղվածության և վարքի ճկունության ( $r=-0.429$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), ուղղվածության և ինքնաընդունման ( $r=-0.256$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ) սանդղակների միջև: Վերոնշյալ կապերը ներկայացնում ենք գծապատկերի տեսքով:

## Գծապատկեր 2

### Գործարար և անձնային որակների դրսևորման առանձնահատկությունները



Չոգեբանական վերլուծության ենթարկելով հետազոտության ընթացքում բացահայտված տվյալները՝ նկատում ենք, որ արտաքին դրական դրդապատճառների և գործարար որակների արտահայտվածություն ունեցող հրամանատարը, թեև սոցիալական հետաքրքրությունն ընդունում է որպես արժեք, այն դրսևորում է հետևելով հասարակության ընդհանուր սկզբունքներին և պահանջներին, ցանկանալով ամրապնդել դոմինանտության, գերազանցության զգացումը և ընդունել ինքն իրեն, ինչն էլ վկայում է սոցիալական ուղղվածության թվացյալ լինելու մասին:

Անձի այս բնութագրերը շատ նման են Ա. Ադլերի նկարագրված թերարժեքության բարդույթ ունեցող անձի բնութագրին, ով առանձնանում է ցածր ինքնաընդունմամբ, ինքնագնահատականով ու այդ բարդույթը հաղթահարելու և ցածր ինքնագնահատականը բարձրացնելու նպատակով ընտրում է բարդույթի հաղթահարման դրական՝ կառուցողական ուղղվա-

ծությունը՝ հարաբերակցելով իր գերազանցության, դոմինանտության ձգտումը սոցիալական հետաքրքրության արտահայտման հետ<sup>10</sup>:

Այժմ քննարկենք այլասիրության, կարեկցողականության և արտաքին ու ներքին դրդապատճառների միջև առկա փոխկապակցվածությունը:

Հետազոտության ընթացքում բացահայտված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործարարության սանդղակը գտնվում է ուղիղ հարաբերակցական կապի մեջ կարեկցողականության ( $r=0.250$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ), այլասիրության սանդղակների ( $r=0.266$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ) հետ: Ինչպես նշել ենք, գործարար որակների արտահայտվածությամբ բնութագրվում է արտաքին դրդապատճառների գերակայություն ունեցող սպան: Ինչը նշանակում է, որ բարձր այլասիրությունն ու կարեկցողականությունը հատուկ են արտաքին դրդապատճառների և գործարարության բարձր ցուցանիշներով առանձնացող սպային: Բացահայտվել է նաև, որ կարեկցողականության սանդղակը գտնվում է ուղիղ հարաբերակցական կապվածության մեջ այլասիրության ( $r=0.549$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), հոգեբանական տակտի ( $r=0.620$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), կախյալության ( $r=0.308$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) և զիջողականության ( $r=0.289$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ) սանդղակների, իսկ հակադարձ կապվածության մեջ՝ վարքի ճկունության ( $r=-0.375$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) սանդղակի հետ: Այլասիրության սանդղակը գտնվում է ուղիղ հարաբերակցական կապի մեջ հոգեբանական տակտի ( $r=0.255$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ) և զիջողականության ( $r=0.251$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) սանդղակների, իսկ հակադարձ կապվածության մեջ՝ վարքի ճկունության ( $r=-0.268$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ) սանդղակի հետ, ինչը վկայում է այն մասին, որ հրամանատարը, ով առանձնանում է արտահայտված կարեկցողականությամբ և այլասիրությամբ, այդ որակները դրսևորում է հոգեբանական տակտի զգացումից ելնելով, սոցիալական ընդունելության արժանանալու նպատակով, քանի որ հոգեբանական տակտի սանդղակի բարձր ցուցանիշները վկայում են, որ տվյալ անձն առավելապես կողմնորոշված է դեպի հասարակական կարծիքը, ներշնչվող է, ձգտում է սոցիալական ընդունելության արժանանալ, որը և արտաքին դրական դրդապատճառ է: Սա լրացուցիչ անգամ փաստում է, որ հրամանատարը բարձր կարեկցողականություն և այլասիրություն է դրսևորում արտաքին դրական դրդապատճառների ազդեցությամբ: Հարկ է նշել նաև, որ հոգեբանական տակտի սանդղակը, բացի վերը նշված սանդղակներից, ուղիղ համեմատական կապվածության մեջ է կախյալության ( $r=0.440$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), զիջողականության ( $r=0.309$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) և հակադարձ կապի մեջ՝ վարքի ճկունության ( $r=-0.280$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ) սանդղակների հետ: Իսկ կախյալության և զիջողականության սանդղակների միջև հաստատվել է արտահայտված ուղիղ հարաբերակցական կապ ( $r=0.557$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ): Այս բազմակողմ հարաբերակցական կապերը հարկ ենք համարում ներկայացնել աղյուսակով:

<sup>10</sup> Տե՛ս Хьелл Л. Зиглер Д., նշվ. աշխ., էջ 170:

**Աղյուսակ 1**

**Գործոնների միջև համահարաբերակցության գործակիցները**

N=138 (p<0.05)\* (p<0.01)\*\*

Հատկություններ		այլասիրություն	կարեկցողականություն	հոգեբանական տակտ	վարքի ճկունություն	զիջողականություն	կախյալություն
այլասիրություն	համ. գործ.	1.000	0.549**	0.295*	-0.268*	0.251*	0.105
կարեկցողականություն	համ. գործ.	0.549**	1.000	0.620**	-0.375**	0.289*	0.308**
հոգեբանական տակտ	համ. գործ.	0.295*	0.620*	1.000	-0.280*	0.309**	0.440**
վարքի ճկունություն	համ. գործ.	-0.268*	-0.375**	-0.280*	1.000	-0.066	0.054
զիջողականություն	համ. գործ.	0.251*	0.289*	0.309**	-0.066	1.000	0.557**
կախյալություն	համ. գործ.	0.105	0.308**	0.440**	0.054	0.557**	1.000

**Աղյուսակից երևում է, որ հրամանատարների թե՛ բարձր այլասիրությունը, թե՛ բարձր կարեկցողականությունը և թե՛ հոգեբանական բարձր տակտը ուղեկցվում են վարքի ցածր ճկունությամբ՝ դոգմատիզմով, ընդհանուր սկզբունքներին խստորեն ենթարկվելու հատկությամբ: Իսկ բարձր կարեկցողականությունն ու հոգեբանական տակտը ենթադրում են բարձր կախյալություն և զիջողականություն, բարձր այլասիրությունը՝ բարձր զիջողականություն:**

Ակնհայտ է, որ այլասիրության, կարեկցողականության բարձր արտահայտվածության դեպքում հրամանատարի այդ անձնային որակներն ուղեկցվում են՝

- հոգեբանական տակտի զգացումով, սոցիալական ընդունելության արժանանալու ձգտմամբ (արտաքին դրական դրդապատճառ),
- վարքի ցածր ճկունությամբ՝ դոգմատիզմով, ընդհանուր սկզբունքներին ենթարկվելու հատկությամբ,
- բարձր կախյալությամբ՝ թույլ սոցիալական հասունությամբ, ցածր ինքնուրույնությամբ,
- բարձր զիջողականությամբ՝ սոցիալական անհարմարվողականությամբ, ցածր ինքնագնահատականով, արտահայտված ինքնախարազանմամբ:

Այս բնութագրերը շատ նման են թաքնված եսասիրությամբ (կեղծ այլասիրությամբ) առանձնացող և ախտաբանական ծուլման մեջ գտնվող անձի բնութագրերին: Ինչպես արդեն նշվեց, համաձայն է. Ֆրոմի, թաքնված եսասիրությամբ մարդիկ ապրում են միայն ուրիշների համար և նույնիսկ հպարտանում, որ իրենք իրենց մյուսներից ցածր են դասում, այսինքն՝ դրսևորում են բարձր կախյալություն և զիջողականություն: Իսկ ախտաբանական ծուլման դեպքում անձը չի զգում սահմանը իր և դիմացինի «ես»-երի միջև՝ նմանապես առանձնանալով բարձր կախյալությամբ և զիջողականությամբ: «Միջանձնային ծուլունը նման է հիպնոսի, որի ժամանակ անձը

չի գիտակցում, որ իր փոխարեն նրա հոգեկանը կառավարում է մեկ ուրիշը, և նա դառնում է այդ մեկ ուրիշի ստրուկը՝ միանտաբար կարծելով, որ իր գործողությունները բխում են սիրուց», - նշում է Գ. Շահվերդյանը<sup>11</sup>:

Վերլուծելով հետազոտության ընթացքում բացահայտված տվյալները՝ նկատում ենք, որ արտաքին դրական դրդապատճառների առաջնայնության դեպքում հրամանատարը դրսևորում է այլասիրություն, կարեկցողականություն, օգնում, կարեկցում է այլ մարդկանց, որպեսզի արժանանա զովասանքի, ընդունելության: Այս սպան ծուլում է իր «ես»-ը դիմացինի «ես»-ին և հուսահատվում, երբ չի ստանում շնորհակալական վերաբերմունք, գնահատանք, ինչից էլ ընկնում է նրա ինքնագնահատականը, նա հուսահատվում է և խարազանում, մեղադրում ինքն իրեն, թե ինչու է ինքն այդքան նվիրված մարդկանց (դրսևորում է բարձր զիջողականություն), սակայն չի արժանանում փոխադարձ վերաբերմունքի: Գործելով մեծ նվիրվածությամբ և պատրաստականությամբ, սակայն չարժանանալով փոխադարձ վերաբերմունքի (տալիս է, բայց չի ստանում)՝ նա ընկնում է ինքնամեղադրանքի, վիրավորվածության գիրկը՝ ափսոսալով իր այդքան մեծ կապվածության համար: Վերջինս վկայում է անձի բարձր կախյալության մասին: Շատ հաճախ այս մարդկանց թվում է, որ իրենք ինչ անում են, անում են սիրով, իրենց կամքով՝ ցանկությամբ, մինչդեռ նրանք գործողության իրականացման ցանկությունը շփոթում են գործողության առաջացման ցանկության հետ, նրանք մեծ բավականությամբ և հաճույքով իրականացնում են այդ գործողությունը, բայց այդ բավարարվածությունը կապված է ոչ թե գործունեության բովանդակության, այլ տվյալ գործունեության մեջ սեփական «ես»-ի արժևորվածության զգացման և ընդհանրապես՝ «ես»-ի ներառվածության հետ: Ձուլման մեջ գտնվող անձի կողմից հաճախ հնչող արտահայտություններից են. «Ես այդքան անում եմ, բայց փոխադարձը ոչինչ չեմ ստանում», կամ՝ «Ես եմ մեղավոր, որ այդքան շատ եմ նվիրվում մարդկանց»:

Անհերքելի է այլասիրության ու կարեկցողականության անձնային որակների դրական նշանակությունը շրջապատող մարդկանց և հասարակության համար, սակայն, երբ դրանք ուղեկցվում են արտաքին դրական դրդապատճառների գերակայությամբ, բացասաբար են անդրադառնում հենց այդ որակները կրող անձի վրա:

ՀՀ ՁՈԻ հրամանատարների մասնակցությամբ իրականացված հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարաբերակցական կապվածություն գոյություն չունի ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառների և այլասիրության, կարեկցողականության, սոցիալական ուղղվածության սանդղակների միջև: Թեև ընթացաբովանդակային դրդապատճառների գերակայությամբ սպան կարող է արտահայտել **թե՛ բարձր և թե՛ ցածր այլասիրություն, կարեկցողականություն, սոցիալական հետաքրքրություն**, սակայն դրսևորվող այլասիրությունն ու կարեկցողականությունը ինքնաբուխ են, ուղեկցվում են բարձր ինքնաընդունմամբ, ինքնահարգանքով և չեն պայմանավորվում արտաքին գործոն-

<sup>11</sup> Գ. Շահվերդյան, Հոգեկան առողջության և բարոյականության հարաբերակցությունը, «Հոգեբանությունը և կյանքը», թիվ 2, Եր., 2001, էջ 128:

ներով, հետևաբար, չեն ուղեկցվում բարձր կախյալության, զիջողականության զգացումներով: Վերջինիս մասին է վկայում հետազոտության ընթացքում բացահայտված ուղիղ հարաբերակցական կապերի առկայությունը ներքին դրդապատճառների և վերահսկողության ներքին լոկուսի ( $r=0.266$ ,  $n=138$ ,  $p\leq 0.05$ ), ներքին դրդապատճառների և ինքնաընդունման ( $r=0.311$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), ներքին դրդապատճառների և ինքնահարգանքի ( $r=0.363$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) սանդղակների միջև:

Ներքին դրդապատճառների առաջնայնությամբ առանձնացող հրամանատարին օտար է «**Մինչև քեզ նեղություն չտաս, ուրիշին լավություն չես անի**» ասացվածքի իմաստը, քանզի նա մարդկանց օգնելն ընկալում է որպես բնական, ինքնին հասկանալի երևույթ, և քանի որ նա դա անում է սիրով, ուստի վերջինս նրանից ավելորդ էներգիա չի պահանջում:

Համաձայն «Անձնային և գործարար որակների փորձագիտական գնահատում» մեթոդիկայի՝ ղեկավարը արդյունավետ է համարվում այն դեպքում, երբ գործարար որակների արտահայտվածությունը հարաբերակցվում է սոցիալական բարձր ուղղվածությամբ, կարեկցողականությամբ, այլասիրությամբ, ցածր կախյալությամբ ու զիջողականությամբ:

Հետազոտական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահայտված գործարարությամբ հրամանատարը մի կողմից բնութագրվում է ցածր զիջողականությամբ ( $r=-0.339$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ) և կախյալությամբ ( $r=-0.317$ ,  $n=138$ ,  $p\leq 0.01$ ), մյուս կողմից առանձնանում է ընդգծված սոցիալական ուղղվածությամբ, բարձր այլասիրությամբ, կարեկցողականությամբ, որոնք, սակայն, ուղեկցվում են բարձր կախյալությամբ և զիջողականությամբ՝ արտահայտվելով թվացյալ այլասիրության, սոցիալական ուղղվածության տեսքով: Փաստորեն, արդյունավետ ղեկավարման համար անհրաժեշտ գործարար որակներ ունեցող հրամանատարը զիջող չէ և արտահայտում է ցածր կախյալություն, սակայն դրսևորում է թվացյալ սոցիալական հետաքրքրություն, այլասիրություն և կարեկցողականություն, ինչն ուղեկցվում է բարձր զիջողականությամբ և կախյալությամբ: Նման հակասությունը հրամանատարի գործնական և անձնային մակարդակում ենթադրում է աններդաշնակություն գործարար «ես»-ի և անձնային «ես»-ի միջև, որը կարող է հանգեցնել հրամանատարի գործունեության արդյունավետության անկման: Իսկ քանի որ մենք գործարար որակների բարձր արտահայտվածություն և թվացյալ այլասիրություն ու կարեկցողականություն բացահայտել ենք արտաքին դրական դրդապատճառների գերակայության դեպքում, ուստի կարող ենք հավաստել, որ այս բնորոշումները վերաբերում են այն հրամանատարներին, որոնց գործունեության հիմքում ընկած են գլխավորապես արտաքին դրական դրդապատճառները:

**Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ հրամանատարների շրջանում արտաքին դրական դրդապատճառների գերակայության ներքո արտահայտվող բարձր այլասիրությունը, կարեկցողականությունը, ընդգծված սոցիալական ուղղվածությունը (սոցիալական հետաքրքրությունը) ունեն թվացյալ բնույթ, ինչը խոչընդոտում է անձի ներդաշնակ զարգացմանը:**

**СИРАНУШ АНТОНЯН – Проблема взаимообусловленности экстринсивных, интринсивных мотивов и личностных качеств.** – В статье проанализированы социальный интерес, альтруизм и экстринсивные и интринсивные мотивы, обусловленные соответственно внешними (поощрения, наказания и т. д.) и внутренними (процессуально-содержательные мотивы) факторами. Представлены результаты психологических исследований, проведенных совместно с командирами ВС РА. Они показывают, что при доминировании экстринсивных мотивов высокий уровень альтруизма и социального интереса носит ложный характер, что препятствует гармоничному развитию личности и снижает эффективность командной деятельности.

**SIRANUSH ANTONYAN – The Issue of Interdependence of Extrinsic, Intrinsic Motives and Personality Traits.** – The interdependence of altruism, social interest and extrinsic and intrinsic motives, stimulated, respectively, by external (encouragement, penalty, etc.) and internal (procedural-substantial motives) factors, is analyzed in this article. The results of psychological studies, administered with officers of RA Armed Forces, are presented. The analysis of the research data shows that the high level of altruism and social interest has a false nature under prepotency of extrinsic motives. Both the false altruism and social interest serve as obstacles for harmonic personal development and decrease the efficiency of commander's activity.